

Սուրեն Պապիկյան

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար

Ծնվել է 1986թ. ապրիլի 26-ին Ստեփանավանում

Սովորել է Լոռու Բերդ գյուղի դպրոցում, **2003 թվականին** ավարտել է Ստեփանավանի թիվ 1 վարժարանը և ընդունվել ԵՊՀ պատմության ֆակուլտետ:

Ուսումնառության ընթացքում զորակոչվել է ՀՀ զինված ուժեր:

2009-2011թթ. գլխավորել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերությունը:

Գերազանց առաջադիմության համար արժանացել է ֆակուլտետի «Թաթուլ Կրպեյան» անվանական կրթաթոշակի:

2011թ. գերազանց առաջադիմությամբ ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի մագիստրատուրան:

2010-2016թթ. ուսմանը զուգահեռ աշխատել է պատմության ուսուցիչ Երևանի թիվ 54 ավագ դպրոցում:

2011թվականից դասավանդել է «Քվանտ» վարժարանում:

2012-2016թթ. սովորել է Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի ասպիրանտուրայում:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հիմնադիր անդամ է:

2016թ. հոկտեմբերի 30-ին ընտրվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության անդամ: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության փոխնախագահ է:

2017թ. աշխատել է Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցությունում որպես փորձագետ:

2017թ. ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրություններում «ԵԼՔ» դաշինքի կողմից ռեյտինգային ընտրակարգով առաջադրվել է պատգամավորի թեկնածու Լոռու մարզն ընդգրկող թիվ 9 ընտրատարածքում:

2018թ. մարտի 31-ին մեկնարկած «Իմ քայլը» շարժման նախաձեռնող անդամ է, որը ապրիլ-մայիս ամիսներին հանգեցրել է ոչ բռնի, ժողովրդական թավշյա հեղափոխության:

2018թ. մայիսի 11-ին նշանակվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար: